3 հունիսի 2010 թվականի N 687 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 21-Ի N 557 ԵՎ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-Ի N 1911-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ

Մ Ա Մ Ի Ն

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի առողջապահության համակարգի օպտիմալացման ծրագիրը հաստատելու մասին» N 557 որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի առողջապահության համակարգի օպտիմալացման ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) ըստ վարչատարածքների՝ ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայություններում առաջարկվող օպտիմալացման գործընթացի «Նոյեմբերյանի վարչատարածք» բաժնի 3-րդ կետում՝

ա. կետից հանել «և «Բագրատաշենի ԳԲԱ», «Բերդավանի ԳԲԱ», «Զորականի ԳԲԱ», «Ոսկևանի ԳԲԱ» փակ բաժնետիրական ընկերությունները» բառերը,

բ. կետին նախորդող աղյուսակի՝ Նոյեմբերյանի տարածաշրջանին վերաբերող հատվածը լրացնել հետևյալ պարբերություններով.

«	Բագրատաշենի ԳԲԱ	թողնել նույն կարգավիճակով	1 ընտանեկան բժշկի գրասենյակ	Բագրատաշենի ԳԲԱ 2652 Դեբեդավանի ԲՄԿ 652 Դեղձավանի ԲՄԿ 246 ընդամենը 3550
	Զորականի ԳԲԱ	թողնել նույն կարգավիճակով	1 ընտանեկան բժշկի գրասենյակ	Զորականի ԳԲԱ 1031 Հաղթանակի ԲՄԿ 1124 Պտղավանի ԲՄԿ 850 ընդամենը 3005

Ոսկևանի ԳԲԱ	թողնել նույն կարգավիճակով	1 ընտանեկան բժշկի գրասենյակ	Ոսկևանի ԳԲԱ 1434 Ոսկեպարի ԲՄԿ 882 Բաղանիստի ԲՄԿ 770 ընդամենը 3086

»,

գ. կետին նախորդող աղյուսակի «Ընդամենը՝ Նոյեմբերյանի տարածաշրջանում» տողում «16» թիվը փոխարինել «12» թվով , իսկ «36520» թիվը՝ «31346» թվով:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության մարզերի առողջապահության համակարգերի օպտիմալացման ծրագրերը հաստատելու մասին» N 1911-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման N 6 հավելվածի՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի առողջապահության համակարգի օպտիմալացման ծրագրի «III. Նոյեմբերյանի տարածաշրջան» բաժնի՝

ա. 1- ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. «Նոյեմբերյանի պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության գույքի կազմից առանձնացնել պոլիկլինիկայի (շուրջ 893 քառ. մ տարածք) և Բագրատաշենի գյուղական համայնքում տեղակայված գյուղական բժշկական ամբուլատորիայի (շուրջ 481 քառ. մ տարածք) շենքերը և հանձնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը: Բաժնետոմսերի հետգնման և մարման միջոցով՝ համապատասխան չափով նվազեցնել «Նոյեմբերյանի պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը:

«Նոյեմբերյանի պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության գույքի կազմից առանձնացնել «Նոյեմբերյանի պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության կազմում հաշվառված՝ Ոսկևանի, Զորականի և Բագրատաշենի գյուղական համայնքների բժշկական ամբուլատորիաների գույքը և սեփականության իրավունքով հանձնել «Ոսկևանի բժշկական ամբուլատորիա», «Զորականի գյուղական բժշկական ամբուլատորիա» և «Բագրատաշենի գյուղական բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերություններին: Բաժնետոմսերի

հետգնման և մարման միջոցով՝ համապատասխան չափով նվազեցնել «Նոյեմբերյանի պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը։

Բաժնետոմսերի թողարկման և տեղաբաշխման միջոցով ավելացնել «Ոսկևանի բժշկական ամբուլատորիա», «Զորականի գյուղական բժշկական ամբուլատորիա» և «Բագրատաշենի գյուղական բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերությունների կանոնադրական կապիտալները»,

բ. 5-րդ կետն ուժը կորցրած ճանաչել։

3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին՝ Բագրատաշենի գյուղական համայնքում տեղակայված գյուղական բժշկական ամբուլատորիայի շենքն անհատույց և ժամանակավոր օգտագործման իրավունքով հատկացնել «Բագրատաշենի գյուղական բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերությանը։

4. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին՝

1) մինչև 2010 թվականի հուլիսի 30-ը ավարտել սույն որոշմամբ նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի առողջապահության համակարգի օպտիմալացման ծրագրից բխող առողջապահական կազմակերպությունների օպտիմալացման աշխատանքների իրականացումը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան.

2) մինչև 2010 թվականի օգոստոսի 31-ը Հայաստանի Հանրապետության կառավարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում սույն որոշմամբ նախատեսված առողջապահության համակարգի օպտիմալացման ծրագրի իրականացման գործընթացի մասին հաշվետվություն։

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2010 թ. հունիսի
Երևան